# ԱԳՐՈ Լրատու

ՓԵՏՐՎԱՐ 25 - ՄԱՐՏ 6 2015 Թ. ԹԻՎ 4 (2059)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ


## ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

*Թանկագին կանայք, մայրեր, քույրեր և աղջիկներ,*

*Ձերմորեն շնորհավորում եմ Ձեզ մարտի 8-ի՝ կանանց միջազգային օրվա առթիվ: Գարնանամուտի, բնության զարթոնքի շնչով առլեցուն այս գեղեցիկ տոնը, որով մեզանում ոչ պաշտոնապես մեկնարկում է նաև «կանանց մեկամսյակը», հայ կնոջ մեծարումի և գնահատանքի, նրան ջերմ ժպիտներ պարգևելու ևս մեկ հրաշալի առիթ է բոլորիս համար:*

*Դուք Ձեր անսահման ներողամտության, բարության, դժվարությունները հաղթահարելու ի վերուստ տրված ունակության և լավատեսության շնորհիվ կարողացել եք ինչպես ամուր պահել պետության կայացման և զարգացման հիմնական հենասյունը՝ ընտանիքը, այնպես էլ ակտիվ դերակատարում ունենալ երկրի հասարակական-քաղաքական կյանքում:*

*Հատկապես ցանկանում եմ ընդգծել կանանց դերը Հայաստանի գյուղատնտեսության զարգացման գործում, որտեղ այսօր նրանք գերակշիռ մաս են կազմում: Գյուղերում ապրող կանանց համար գարունը ոչ միայն ծաղիկների, տոնական բարեմաղթանքների հաճելի սպասում է, այլ՝ առաջին հերթին աշխատանքի, արարումի խորհուրդ ունի՝ հաճախ հոգսաշատ, մարտահրավերներով լի, բնության արհավիրքների, հողի հետ կռիվ տալու դժվարին առօրյա, որը նրանց անմնացորդ նվիրումի և քանասիրության շնորհիվ, ավարտվում է բերք ու բարիքի ծնունդով:*

*Եվս մեկ անգամ շնորհավորում եմ այս գարնանային տոնի առիթով և մաղթում եմ Ձեզ արևառատ օրեր, բազում բերկրալից, խանդավառ պահեր, անսահման սեր և ուրախություն:*

*Թող Ձեր կյանքի յուրաքանչյուր օրը պարուրված լինի երջանկության և այս գարնանաբույր տոնի զգացումով:*

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

## Հայ-չինական հարաբերությունների զարգացում

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Տյան Էրլունին:**

Շնորհավորելով հյուրին մեր երկրում դիվանագիտական առաքելություն ստանձնելու կապակցությամբ՝ նախարարը համոզմունք է հայտնել, որ նրա պաշտոնավարման ընթացքում հայ-չինական հարաբերությունները նոր լիցք կստանան:

Հանգամանորեն անդրադառնալով գյուղատնտեսության ոլորտում երկու երկրների միջև առկա համագործակցությանը՝ նախարարը նշել է, որ երկրի անկախացումից հետո, Չինաստանի կառավարությունը տեխնիկական մեծ աջակցություն է ցուցաբերել Հայաստանի գյուղատնտեսությանը:

Հանդիպման ընթացքում նախարարը նաև առաջարկել է քննարկել Հայաստանում կոոպերատիվների չինական մոդելի ներդրման հնարավորությունը: Դեսպան Տյան Էրլունն, իր հերթին, նշել է, որ հետաքրքրված է գյուղատնտեսության և հատկապես՝ պարենային անվտանգության ոլորտում երկու երկրների միջև հարաբերությունների զարգացմամբ ու խորացմամբ, և պատրաստակամություն է հայտնել աջակցել այդ ուղղությամբ համագործակցության ընդլայնմանը:

2

## Արդյունավետ համագործակցություն

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Եվրասիական զարգացման բանկի (EDB) պատվիրակությանը, որի կազմում էին բանկի ներկայացուցչության տնօրեն Սերգեյ Իգնատովը, ներդրումային ծրագրերի խմբի ղեկավար Ալեքսեյ Չերեկաևը և հայաստանյան գրասենյակի փոխտնօրեն Արմեն Պողոսյանը:**

«Մենք բարձր ենք գնահատում Հայաստանում Եվրասիական զարգացման բանկի գործունեության արդյունավետությունը և հուսով ենք, որ այս հանդիպումով սկիզբ կդրվի նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ սերտ համագործակցությանը», –նշել է նախարարը: Նախարարը ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի գերակայություններն ու առաջիկա առաջնահերթ ծրագրերը՝ մատնանշելով հնարավոր համագործակցության հիմնական ուղղությունները: Մասնավորապես, նախարարը նշել է, որ գյուղատնտեսության նախարարությունը հետաքրքրված է ջերմոցային տնտեսությունների և ձկնաբուծության ոլորտների ֆինանսավորման ծրագրերի իրականացմամբ: Նախարարն ընդգծել է նաև ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսավորման անհրաժեշտությունը՝ հատկապես կարևորելով ջրամբարների կառուցման խնդիրը:

Սերգեյ Իգնատովն իր հերթին պատրաստակամություն է հայտնել համագործակցել ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ՝ հույս հայտնելով, որ գերատեսչության և բանկի համատեղ աշխատանքը կլինի արդյունավետ և կկրի շարունակական բնույթ: Հանդիպման ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության բնագավառին առնչվող երկկողմ հետաքրքրություն ունեցող մի շարք այլ հարցեր ևս: Կողմերը պայմանավորվել են քայլեր ձեռնարկել համատեղ ծրագրերի մշակման ուղղությամբ:


Էջ 4 Գործարար կանայք

Էջ 6 «Ջրվեժ-Ձորաղբյուր» ՋՕԸ-ի աշխատանքները

Էջ 7 Մասնագետի խորհուրդ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

# Հայ-չինական հարաբերությունների զարգացում

1

Հանդիպմանը նախարարն առաջարկել է Հայաստանում կազմակերպել գյուղատնտեսական ոլորտի բիզնես-ֆորում, որը հնարավորություն կընձեռի կողմերին՝ ծանոթանալ երկու երկրներում թողարկվող պարենային ապրանքատեսակներին, ինչպես նաև խթան կհանդիսանա գործարար կապերի աշխուժացման և նոր ներդրողների ներգրավման համար:

Որպես երկու երկրների միջև ագրարային ոլորտում փոխգործակցության զարգացման հնարավոր ուղղություններ՝ կողմերն առանձնացրել են համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, ջերմատների կառուցումը, հակակարկտային ցանցերի և կաթիլային ոռոգման համակարգի ներդրումը, ինչպես նաև համագործակցության խթանումը՝ գիտական և խորհրդատվական ոլորտներում:

Հանդիպման ավարտին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարը խնդրել է դեսպանին իր չինացի գործընկերոջը փոխանցել 2015 թվականին Հայաստան այցելելու հրավերը:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

# ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՃ

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին ընդառաջ, խորհրդակցություն է անցկացրել Գեղարքունիքի մարզում:**

Խորհրդակցությանը ներկա էին մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Գագիկ Խաչատրյանը, համայնքապետեր, ջրային ոլորտի և այլ պաշտոնատար անձինք: «2014 թվականին վարելահողերի օգտագործման մակարդակով և հացահատիկային ու հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակությամբ Գեղարքունիքի մարզը հանրապետության առաջատարն է», - նշել է նախարար Սերգո Կարապետյանն իր խոսքում: Մասնավորապես, նախարարի խոսքով, մարզում առկա 81739.7 հեկտար վարելահողերից, 2014 թ. օպերատիվ տվյալներով, մշակվել է 76315 հեկտարը (93.4%), նախորդ տարվա համեմատ՝ 1745 հեկտարով ավել: Իսկ հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքային տարածությունները 2014 թ. կազմել են 44102 հա: Ըստ կանխատեսումների՝ 2015թ. կկատարվի 44572 հա ցանք՝ նախորդ տարվանից 470 հեկտարով ավել: Բարձր գնահատելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից և Համաշխարհային բանկի աջակցությամբ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի (CARMAC) շրջանակում մարզում արձանագրված արդյունքները՝ նախարարն ընդգծել է, որ մարզի 20 համայնքներում հիմնվել են գյուղատնտեսական կոոպերատիվներ, և այդ ցուցանիշով ևս մարզը զբաղեցնում է առաջին տեղը: Նախարարը տեղեկացրել է նաև, որ արդեն մեկնարկել է ծրագրի երկրորդ փուլը, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի ապահովել՝ կաթի, մսի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտղի և մեղրի արտադրության ոլորտներում իրացվող և արտահանվող արտադրանքի ծավալային աճ:

Անդրադառնալով մարզում առկա ոռոգման հետ կապված խնդիրներին՝ Նախարարը հավաստիացրել է, որ առաջիկայում մարզ կայցելեն ոլորտի պատասխանատուները՝ տեղում խնդիրների հետ ծանոթանալու և դրանց լուծումներ տալու նպատակով: Խորհրդակցության ավարտին, գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով պարգևատրվեց Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի ֆերմեր Իվան Ասատրյանը, իսկ ոլորտի մի շարք ներկայացուցիչների հանձնվեցին շնորհակալագրեր: Այնուհետև նախարարն այցելել է Լճաշեն համայնքում գտնվող կաթի վերամշակմամբ զբաղվող «Արա-Արեգ» ՍՊԸ, հետևել աշխատանքների ընթացքին: Ընկերության տնօրենը նախարարին տեղեկացրել է, որ ներկայումս իրականացվում են կաթի մթերման կետի, լաբորատորիայի, պանրի արտադրամասի ընդլայնման, ինչպես նաև դրանց սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանն ու անհրաժեշտ սարքավորումներով հագեցմանն ուղղված աշխատանքներ:

Ընկերությունը 2014 թվականին մթերել է շուրջ 600 տոննա կաթ, իսկ 2015 թվականի փետրվարի 25-ի դրությամբ՝ շուրջ 100 տոննա կաթ՝ մեկ լիտրի դիմաց գյուղացիներին վճարելով 170 դրամ:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

**Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ, կառավարությունում քննարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության՝ 2014 թ. ընթացքում կատարված հիմնական աշխատանքների, ՀՀ կառավարության 2014 թ. գործունեության միջոցառումների ծրագրի, գերակա խնդիրների կատարման և գնահատված կատարողականի հաշվետվությունը:**

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, ներկայացնելով 2014թ. իրականացված աշխատանքները, նշել է, որ հաշվետու տարում արձանագրվել է գյուղատնտեսության մասնաբաժնի աճ՝ ՀՀ համախառն ներքին արդյունքի մեջ: Նախորդ տարվա համեմատ, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալն աճել է 7.2 տոկոսով, իսկ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ոլորտին բաժին է ընկել արդյունաբերության համախառն արտադրանքի 38.4 տոկոսը: Բուսաբուծության համախառն արտադրանքի ծավալն աճել է 6.9 տոկոսով, անասնապահությանը՝ 7.8 տոկոսով: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը բարձրացել է 3.2 տոկոսով, 14.6 հազար հեկտարով ավելացել են մշակովի ցանքատարածությունները:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են 14 տոկոսով վարկեր, որոնց 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է: Վարչապետի հանձնարարությամբ, 2015 թ. ոլորտին տրամադրվող վարկերը հանրապետության բոլոր գյուղական համայնքների համար կսուբսիդավորվեն 6 տոկոսային կետով: Պետական աջակցության ծրագրեր են իրականացվել անասնաբուծության տարբեր ճյուղերի և հացահատիկային տնտեսության զարգացման, գյուղատնտեսությունում օգտագործվող նյութական և մարդկային ռեսուրսների մատչելիության բարձրացման, ենթակառուցվածքների բարելավման, ոլորտի տեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով: Իրականացվել են բնական աղետների հետևանքների մեղմման, գյուղատնտեսական կոոպերատիվների խթանման, բույսերի պաշտպանության, գյուղատնտեսական կենդանիների պատվաստման միջոցառումներ, խորհրդատվական աշխատանքներ են տարվել գյուղական համայնքների հետ, համագործակցության հուշագրեր են ստորագրվել ոլորտային միությունների հետ, ընդլայնվել է միջազգային համագործակցությունը:

2014 թ. ընթացքում, իրենց ոլորտներում կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ զեկուցել են նաև գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գտնվող պետական մարմինների ղեկավարները՝ Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը, Սևանդամերքի անվտանգության պետական ծառայության պետ Արմեն Հայրապետյանը, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Գագիկ Խաչատրյանը և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտուն Մաթևոսյանը:

Վարչապետը նշել է, որ գյուղատնտեսության զարգացումը ՀՀ կառավարության առաջնահերթություններից է, ուստի հորդորել է գյուղատնտեսության նախարարությանը 2015 թ. ավելի արդյունավետ և ակտիվ աշխատել՝ ոլորտում առաջընթաց ապահովելու համար: Հովիկ Աբրահամյանը հանձնարարել է մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել Սևանդամերքի անվտանգության պետական ծառայության գործունեության հասցեականության բարձրացման ու ԵՏՄ-ի շրջանակում համագործակցության ընդլայնման ծրագիր, ջերմոցային տնտեսության զարգացման ծրագիր, որի հիման վրա կիրականացվի նպատակային հողատարածքների գույքագրում, ներդրումային գրավչության բարձրացում և ենթակառուցվածքների բարելավում, բարեփոխումներ կատարել անտառտնտեսություններում՝ վստահությունը վերականգնելու և ապօրինի անտառահատումները բացառելու նպատակով, շարունակել գյուղական համայնքների խոշորացման միջոցառումները և ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքները:

Կառավարության ղեկավարը հանձնարարել է գյուղատնտեսության նախարարին՝ ուշադրության կենտրոնում պահել ոլորտի խնդիրները և հետևողական լինել հանձնարարականների կատարման հարցում:

# ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) պատվիրակությանը, որի կազմում էին Եվրոպայի և Եվրասիայի հարցերով փոխտնօրենի պաշտոնակատար Սյուզան Ֆրիցը, ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության ղեկավար Քարեն Հիլիարդը և այլոք:**

«Մենք շնորհակալ ենք ԱՄՆ կառավարությանը՝ գյուղատնտեսության ոլորտում Հայաստանին ցուցաբերվող օժանդակության համար, և հուսով ենք, որ մեր արդյունավետ համագործակցությունն առաջիկա տարիներին կշարունակվի և ավելի կընդլայնվի»,– նշել է Սերգո Կարապետյանը: Այնուհետև նախարարը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի ներկա վիճակը, խնդիրներն ու առաջիկա անելիքները: Անդրադառնալով ոլորտի գերակա խնդիրներին՝ Սերգո Կարապետյանը մասնավորապես մատնանշել է առաջնահերթ պարենային մթերքի ինքնաբավության և սևանդամերքի անվտանգության մակարդակի բարձրացման, անասնագլխաքանակի և գյուղատնտեսական կենդանիների կաթնատվության ավելացման, կոոպերատիվների ստեղծման, կաթիլային ոռոգման և հակակարկտային ցանցերի համակարգի ներդրման և ջերմոցային նոր տնտեսություններ հիմնելու անհրաժեշտությունը:

Անդրադառնալով ձկնաբուծության ոլորտի խնդիրներին՝ նախարարը կարևորել է օգտագործվող ջրի փակ կամ կիսափակ շրջապտույտի համակարգի ներդրումը՝ առաջարկելով առաջիկայում պիլոտային ծրագրեր իրականացնել մի շարք ձկնաբուծարաններում՝ ջրի խնայողատար ռեժիմով նորագույն համակարգերի ներդրման ուղղությամբ: Ի պատասխան, Քարեն Հիլիարդը տեղեկացրել է, որ գրասենյակի կողմից արդեն մշակվել և հաստատվել են նմանատիպ երեք ծրագրեր, որոնց իրագործումը նախատեսվում է սկսել ընթացիկ տարում: Պատվիրակության ղեկավարը ևս մեկ անգամ հաստատել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության պատրաստակամությունը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ ծրագրերի իրականացման հարցում, և համոզմունք հայտնել, որ այսուհետ երկկողմ համագործակցությունը կլինի արդյունավետ և կնպաստի գյուղատնտեսության բնագավառում առկա խնդիրների լուծմանը:

Ագրոլրատու
Փետրվար 25 - մարտ 6, 2015 թ.
թիվ 4 (2059)

**ԳԱՐՆԱՆԵ ԸՆԴԱՌԱՋ**

## Խորհրդատվական համակարգերի ներկայացում

***ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանը գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ուղղությամբ, գյուղատնտեսության նախարարության կողմից ձեռնարկվող միջոցառումների շրջանակներում, խորհրդատվական համակարգին ներկայացվող խնդիրների քննարկման նպատակով, հերթական խորհրդակցությունն է անցկացրել Կոտայքի մարզում:***

Փոխնախարարը մասնագետների ու խորհրդատուների ուշադրությունն է հրավիրել՝ մարզում չօգտագործվող հողերի գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավելու անհրաժեշտության, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման ներուժի օգտագործման հնարավորությունների վրա: Նա կարևորել է նախարարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերի մասին գյուղացիական տնտեսություններին ժամանակին և պատշաճ ծանուցելու անհրաժեշտությունը, դրանց բաշխման թափանցիկության ապահովումը:

Նախարարի տեղակալն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել մարզում ջերմոցային տնտեսության զարգացման հնարավորությունների օգտագործմանը: Առաջարկվել է գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնին ճշտել ջերմոցների կառուցման համար պիտանի տարածքների առկայությունը, դրանց ծավալները, այդ նպատակի իրականացման գործում առկա խոչընդոտները, ենթակառուցվածքների վիճակը և այլն: Այնուհետև նա հանդիպել է Տեխնիկական մշակաբույսերի փորձարարական կայանի աշխատակիցների հետ: Փոխնախարարը հետևել է քանդված, երկար տարիներ չօգտագործված ջերմոցների նորոգման, վերականգնման, ցանքի համար բնահողի նախապատրաստման, ջրագծի կառուցման, հոսանքագծի անցկացման, գյուղտեխնիկայի վերանորոգման աշխատանքներին:

Գառնիկ Պետրոսյանը դրական է գնահատել կատարվածը և հորդորել տնօրեն Հ. Գասպարյանին համագործակցել Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի հետ՝ վերջինիս կողմից իրականացվող լոլիկի, սմբուկի, տաքդեղի սածիլների արտադրության պատվերների մի մասը իրենց կենտրոնում կազմակերպելու և մարզի գյուղացիական տնտեսությունների պահանջը բավարարելու համար:

## Աշխատանքները՝ ճիշտ ժամանակին

***Նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանն այցելել է Արարատի մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն:***

Հանդիպման ընթացքում, կենտրոնի մասնագետների ու խորհրդատուների հետ համատեղ, քննարկվել են գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ընթացքը, նախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերին առնչվող հարցեր: Մասնագետները հայտնել են փոխնախարարին, որ համայնքներում հողօգտագործողները բարձրացնում են ոռոգման ջրամատակարարումն ավելի վաղ ժամկետում սկսելու հարցը: Այդ կապակցությամբ՝ Գառնիկ Պետրոսյանը տեղեկացրել է, որ նախարարությունը կոնկրետ քայլեր է իրականացնում՝ մինչև մարտի մեկը ոռոգման համակարգը նախապատրաստելու և, կախված բնակլիմայական պայմաններից, ըստ անհրաժեշտության, կայուն ջրամատակարարում ապահովելու համար:

Հանդիպումից հետո, նախարարի տեղակալը, շրջել է դաշտերում՝ գերազանց գնահատելով աշնանացանի վիճակը: Դիտարկումները ցույց են տվել, որ մի շարք համայնքներում ընթացքի մեջ են պտղատու ծառատեսակների, իսկ առանձին դեպքերում՝ նաև խաղողի վազերի էտի աշխատանքները: Նախարարի տեղակալն առաջարկել է ԳԱՄԿ-ի խորհրդատուներին՝ հորդորել գյուղացիական տնտեսություններին՝ ավելորդ շտապողականություն չցուցաբերել և առայժմ կատարել հնդավոր (խնձորենի, տանձենի), իսկ մեկ շաբաթից՝ կորիզավոր (դեղձենի, ծիրանենի) պտղատեսակների էտի աշխատանքները: Գառնիկ Պետրոսյանը տեղեկացրել է նաև, որ խաղողի այգիները նպատահարմար է բացել մարտի սկզբներին և, դրան զուգահեռ, իրականացնել վազերի էտ:

## Ուշադրության կենտրոնում՝ գյուղատնտեսական աշխատանքներն են

***ՀՀ ԳՆ փոխնախարար Գառնիկ Պետրոսյանն այցելել է Արագածոտնի մարզ, հանդիպել գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի մասնագետների ու խորհրդատուների հետ***:

Հանդիպման ընթացքում քննարկվել ու ամփոփվել են նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները, վեր են հանվել խորհրդատվության ոլորտում առկա թերություններն ու բացթողումները և մատնանշվել դրանց հաղթահարման ուղիները: Նախարարի տեղակալն առանձնակի ուշադրություն է հրավիրել գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ուղղությամբ տարվող միջոցառումների իրականացմանը:

«Անհրաժեշտ է բարձրացնել գյուղացիական տնտեսությունների տեղեկացված լինելը՝ պետության կողմից գյուղատնտեսության ոլորտին ցուցաբերվող աջակցության ծրագրերի մասին, միջոցներ ձեռնարկել տրամադրվող օգնությունների արդարացի բաշխումն ու հասանելիությունն ապահովելու ուղղությամբ»,- նշել է Գառնիկ Պետրոսյանը: Փոխնախարարը հորդորել է Արագածոտնի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի աշխատակիցներին՝ ակտիվորեն ներգրավվել սերմացուների, պարարտանյութերի, դիզելային վառելանյութերի բաշխման գործընթացներում՝ պարբերաբար ներկայացնելով տեղեկատվություն նշված գործընթացների վերաբերյալ:

## Անդրադարձ անասնապահությանը

***«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի մեկնարկի շրջանակում, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Գրիշա Բաղիյանն այցելել է Սյունիքի մարզ, որտեղ խորհրդակցություն է անցկացրել մարզային պատասխանատուների հետ՝ անասնաբուժության ոլորտի, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների ծմեռացման ընթացքին առնչվող խնդիրների վերաբերյալ:***

Խորհրդակցությանը ներկա էին նաև «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենը, համայնքապետեր, անասնաբույժներ և տեսուչներ:

Խորհրդակցության ընթացքում մարզի պատասխանատուների հետ մասնավորապես քննարկվել է պետական պատվերի շրջանակներում իրականացվող հակահամաճարակային միջոցառումների ընթացքը, մարզում անասնաբուժության ոլորտում առկա թերություններն ու դրանց լուծման ուղիները, անասնաբույժների կողմից իրենց աշխատանքների ժամանակին և պատշաճ իրականացման անհրաժեշտությունը: Անդրադարձ է կատարվել նաև անասնաբույժների աշխատավարձերի և դրանք ժամանակին վճարելու հարցերին:

Գրիշա Բաղիյանը հուսադրող է համարել մարզում իրականացված բրուզելյոզի պատվաստումների պիլոտային ծրագրի արդյունքները:

Փոխնախարարի տեղեկացմամբ, մարզում կայուն անասնաճարակային իրավիճակ պահպանելու գործընթացն ապահովելու նպատակով, 2015 թվականին ՀՀ կառավարությունը պետական բյուջեի միջոցներից հատկացրել է ավելի քան 40 մլն դրամի ախտորոշիչ, կանխարգելիչ, բուժիչ և ախտահանիչ միջոցներ:

Այնուհետև Գրիշա Բաղիյանն այցելել է Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում գործող կաթի ընդունման մի շարք կետեր, եղել է նաև Խնձորեսկի նորակառույց անասնաբուժական սպասարկման կենտրոնում, ծանոթացել կենտրոնի տեխնիկական հնարավորություններին:

***ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գրիշա Բաղիյանն այցելել է Վայոց ձորի մարզ, որտեղ մասնակցել է «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումներին նվիրված խորհրդակցությանը***:

Խորհրդակցությանը ներկա էին մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության անասնաբուժության տեսչության պետ Հովհաննես Մկրտչյանը, «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Ավագյանը և պաշտոնատար այլ անձինք:

Անդրադառնալով անասնաբուծության ոլորտում, նախորդ տարվա ընթացքում, Վայոց ձորի մարզում գրանցված դրական արդյունքներին՝ Գրիշա Բաղիյանը նշել է, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ընթացիկ տարում նույնպես դրանք պահպանելու ուղղությամբ: Նա նշել է, որ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում, Վայոց ձորի մարզին ընթացիկ տարում հատկացվել է շուրջ 20 մլն դրամի ախտորոշիչ, կանխարգելիչ և բուժիչ միջոցներ, ինչպես նաև անհրաժեշտ պարագաներ՝ անասնաբուժական միջոցառումներ իրականացնելու համար: Իր խոսքում փոխնախարարն անդրադարձել է նաև մարզում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների, այդ թվում՝ բրուցելյոզի կանխարգելման խնդրին՝ շեշտելով հիվանդության հայտնաբերման վաղ շրջանում հիվանդ կենդանիների մեկուսացման և սպանդի ենթարկման կարևորությունը: Գրիշա Բաղիյանը, նշելով, որ նախորդ տարի Վայոց ձորի մարզում շահագործման է հանձնվել ժամանակակից սարքավորումներով հագեցած սպանդանոց, հույս է հայտնել, որ այն կնպաստի բակային մորթի աստիճանական սահմանափակմանը, ինչն էլ, իր հերթին, դրականորեն կանդրադառնա կենդանիների հիվանդությունների կանխարգելման վրա:

Հանդիպումից հետո, փոխնախարարն այցելել է անասնաբուժական մարզային լաբորատորիա, մարզում գտնվող նորակառույց սպանդանոց, ապա՝ Խնձորուտ համայնքում գտնվող տոհմային ոչխարաբուծական ֆերմա, որտեղ բուծվում են Էդիլբայան ցեղի դմակավոր, ճարպամսային տեսակի տոհմային ոչխարներ:

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

# ԿԱՐԵՎՈՐԸ՝ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ Է

***Օլգա Բունիաթյանը հացատեսակների և հացամթերքների արտադրության գծով մասնագիտացած «Բարբարի» ընկերության հիմնադիր տնօրենն է, որը ստեղծվել է 2008 թվականին:***

«Բարբարին» պարսկական քունջութով հացատեսակ է, որը մեզ մոտ մի շարք տեխնոլոգիական փոփոխությունների ենթարկվելուց հետո, սկսեց արտադրվել: Օլգա Բունիաթյանը, ով մասնագիտությամբ երաժիշտ է, գերադասեց իրականություն դարձնել յուրահատուկ հացատեսակների արտադրության կազմակերպման իր վաղեմի երազանքը, քանի որ այդպիսով մի քանի նոր աշխատատեղեր ստեղծվեցին: «Բարբարի» ընկերության արտադրած եգիպտացորենի ալյուրով թեփով կտավատի սերմերով հացատեսակները, ինչպես նաև քունջութով լավաշն արդեն այն ճանաչում և պահանջարկ ունեն սպառողների շրջանում: Յուրօրինակ այդ հացատեսակների միակ արտադրողը հիշյալ ընկերությունն է: Այստեղ արտադրվում է նաև եգիպտացորենի ալյուր: Ի դեպ, ավելի ցածր ինքնարժեքով հումք ստանալու համար նախատեսել են ունենալ նաև եգիպտացորենի սեփական ցանքատարածքներ, ինչպես նաև կազմակերպել ձեթի արտադրություն: Կին գործարարն այլ ծրագրեր էլ ունի, որոնց մասին ոչ թե ուզում է խոսել, այլ դրանք տեսնել՝ արդեն իրականություն դարձած: Ներկայումս քայլեր են ձեռնարկվում ոչ միայն արտադրատեսականու ընդլայնման, այլև նոր շուկաների հայտնաբերման ուղղությամբ: Օլգան աշխատանքի հմուտ կազմակերպիչ է, նախաձեռնող, նաև զիջող ու համակերպվող: Ինչպես գործարար կանանց գերակշռող մասը, նա նույնպես դժգոհում է ժամանակի սղությունից: Պարզապես շատ են անելիքները թե ընկերությունում, և թե տանը: Սակայն հոգսերը երբեք չեն խոչընդոտում գործարարին՝ նոր ծրագրերի իրականացման գործում:

«Բարբարին» հաճախ է մասնակցում ցուցահանդեսներին, կազմակերպում համտեսներ և իր առանձնահատուկ համ ու հոտ ունեցող հացատեսակներով հիացնում այցելուներին: «Կուզենայի, որ անկախ դժվարություններից ու խնդիրներից, մենք լավատես և ուրախ լինենք: Լավ տրամադրությունը շատ բան է փոխում: Իսկ կանայք, առավել ևս, թող միշտ ժպտերես ու պայծառ լինեն»,- ասում է Օլգա Բունիաթյանը:

# ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԿԱՆԱՅՔ

***Ասում են, երբ միավորվում են կանայք, խելամիտ ծրագրեր են ծնվում ու կյանքի կոչվում: Այդպես, իրատեսական ու գործուն ծրագրերի շուրջը համախմբվելով, ստեղծվեց Գառնիի կանանց խումբը, որը համատեղ աշխատանքի կազմակերպման լավագույն օրինակներից է:***

Հինգ անձից բաղկացած խմբի ղեկավարը Աիդա Բաղալյանն է: Արդեն 10 տարի է, ինչ խմբի անդամներն իրականացնում են համատեղ գործունեություն: Վերամշակում են իրենց տնամերձ ու սեփականաշնորհված հողատարածքներում աճեցրած միրգն ու բանջարեղենը, պատրաստում պահածոներ, սուջուխ, մրգային լավաշներ, չրեր, մուրաբաներ, հյութեր, օշարակներ և այլն: Համագործակցում են հարևան Գողթ գյուղի կանանց նույնատիպ խմբի հետ, կատարելով աշխատանքի բաժանում: Ելնելով նպատակահարմարությունից, համատեղ որոշում են, թե որ տեսականին որ գյուղում պետք է պատրաստվի: Ի դեպ, կանայք արտադրում են օրգանիկ գյուղմթերքներ: Գերադասելով ստեղծել առողջարար սնունդ, չեն օգտագործում պարարտանյութեր, թունաքիմիկանտներ ու հերբիցիդներ: «Ես շատ եմ գնահատում այն կանանց, ովքեր ստեղծարար են: Եթե ունես հնարավորություն, ինչու՞ չարտադրես: Չէ՞ որ, աշխատանքն է եկամտի հիմքը: Կուզենայի, որպեսզի յուրաքանչյուր կին այդ ուղղությամբ լուրջ մտածեր»,- ասում է տիկին Աիդան: Ի դեպ, Գառնիի կանանց խմբի պատրաստած արտադրանքն աչքի է ընկնում թե ապրանքային տեսքով, և թե որակով: Իսկ լավագույն ապրանքն, ինչպես ասում են, անպայման գնորդ ունի: Վաճառքն իրականացնում են համատեղ, արդյունքը՝ բաշխում հավասարաչափ: Աշխատանքի այս եղանակը լավագույն օրինակ է, որը և գնահատելի է, և ուսանելի:

# ՏԱՏԻԿՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅՈՎ

***«Ես որպես հայ մտավորական, մեծ ցավ եմ ապրում, երբ գյուղը լքում, հեռանում են երիտասարդները: Պատճառը՝ գյուղում նրանց հետաքրքրությունների բացակայությունն է»,-ասում է «Գյուղի կին» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն և նույնանուն հասարակական կազմակերպության նախագահ Վերա Զաքարյանը, ով Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի Արագածոտնի մարզի կին ձեռներեցության դեսպանն է:***

Ի դեպ, նրան շնորհվել է նաև գյուղատնտեսության ոլորտի կին հերոսի կոչում: «Ես շատ եմ սիրում գյուղը, հողը, անձամբ մասնակցում եմ արտադրության, վերամշակման, ինչպես նաև սպառման գործընթացներին: Բազմիցս մեր տեսականին ներկայացվել է ցուցահանդեսներում, որտեղ գործարարներով ճանաչում ենք միմյանց, շփման և համագործակցության եզրեր ենք ստեղծում»,- նշում է տիկին Վերան: Ավանդական եղանակով պատրաստում ենք մրգաչրային ռուլետներ, լավաշներ, օշարակներ, չրեր և չարազներ: Տեխնոլոգիայի առումով՝ օգտվում ենք Օշական գյուղի տատիկների խորհրդից, որտեղ և գործում է ընկերությունը: Ստեղծել ենք սեփական չրանոց: Ինչ վերաբերում է տեսականուն, ապա այն անընդհատ նորացվում է: Ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում արտադրանքի ապրանքային տեսքին ու փաթեթավորմանը: «Կուզենայի, որպեսզի կանայք սոցիալական խնդիրներ չունենային, և իրենց ստեղծագործ միտքը ժամանցի, ընտանիքի և երեխաների դաստիարակության համար օգտագործեին»,- իր խոսքը եզրափակում է Վերա Զաքարյանը:

***Նյութերը՝ Նելլի Սահակյանի***

ԿՈՏԱՅՔ

# ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

**ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանն այցելել է Կոտայքի մարզի տարածքում տեղակայված մսամթերքի արտադրությամբ զբաղվող «Բեկոն», «Նատֆուդ», Ա/Ձ «Համլետ Հովսեփյան», խաղողի վերամշակմամբ զբաղվող «Շահնազարյան» գինու-կոնյակի տուն, ինչպես նաև կաթի վերամշակմամբ զբաղվող «Չանախ» ընկերություններ:**

Նախարարի տեղակալի և ընկերությունների ղեկավարների հետ կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են ընկերությունների գործունեության նախնական ծրագրերը, նրանց բնականոն գործունեությանը խոչընդոտող խնդիրները և նախանշվել դրանց լուծման ուղիները:

Ռոբերտ Մակարյանն առանձնացրել է ընթացիկ տարվա գյուղատնտեսական հումքի մթերման գործընթացների կազմակերպման անհրաժեշտ միջոցառումների իրականացման կարևորությունը, հորդորել է սկսել հումքի մթերման նպատակով գյուղացիական տնտեսությունների հետ գնման պայմանագրերի կնքման գործընթացը, ինչպես նաև հետագայում գնված հումքի դիմաց ապահովել գյուղացիական տնտեսություններին վճարումների ժամանակին կատարումը:

ԼՈՌԻ

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

***Անասնաբուժության ոլորտի խնդիրները տեղի պատասխանատուների հետ քննարկելու նպատակով, «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում, ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գրիշա Բաղիյանն աշխատանքային այցով Լոռու մարզում էր:***

Խորհրդակցությանը մասնակցում էին նաև ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Արսեն Դարբինյանը, գյուղապետեր, անասնաբույժներ և տեսուչներ: Անդրադառնալով մարզում անասնաբուժության ընդհանուր իրավիճակին, առկա թերություններին ու բացթողումներին՝ փոխնախարարը հատկապես կարևորել է անասնաբույժների պարտականությունների լիարժեք կատարումը՝ հորդորելով ժամանակին և պատշաճ որակով իրականացնել կենդանիների պատվաստումները: Նա նաև հավելել է, որ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում, Լոռու մարզին 2015 թվականին հատկացվել են շուրջ 35 մլն դրամի ախտորոշիչ, կանխարգելիչ և բուժիչ միջոցներ՝ անասնաբուժական միջոցառումներ իրականացնելու համար: Հանդիպումից հետո Գրիշա Բաղիյանն այցելել է նաև մարզի Օձուն համայնքում գտնվող նորակառույց սպանդանոց, որը, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ մեր երկրում կառուցված թվով հինգ սպանդանոցներից մեկն է: Սպանդանոցի տնօրեն Խաչիկ Տիտանյանի հետ քննարկվել են առաջիկա օրերին սպանդանոցի գործարկմանն առնչվող հարցեր: Փոխնախարարը հույս է հայտնել, որ նմանատիպ սպանդանոցների շահագործումը կնպաստի բակային մորթի աստիճանական սահմանափակմանը՝ դրականորեն անդրադառնալով կենդանիների հիվանդությունների կանխարգելման վրա: Այնուհետև Գրիշա Բաղիյանն այցելել է մարզի տարբեր համայնքներում տեղակայված կաթի ընդունման (մթերման) կետեր, որտեղ ծանոթացել է գյուղացիական տնտեսություններից կաթի մթերման գործընթացին, դրանցում տեղ գտած խնդիրներին և առկա խոչընդոտներին: Փոխնախարարը հատկապես կարևորել է կաթի մթերման գործընթացում փոխշահավետ գների ձևավորման և մթերման գների կտրուկ տատանումները բացառելու հարցերը:

### ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

*Օգտվելով ընթացիկ տարվա բարձր ջերմաստիճանային ռեժիմի հետևանքով ստեղծված հնարավորություններից՝ Արարատյան հարթավայրի մի շարք համայնքներում սկսվել են պտղատու ծառատեսակների, իսկ առանձին վայրերում՝ նույնիսկ խաղողի վազերի էրգի ու ձևավորման, կարտոֆիլի տոնկի աշխատանքները: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տեղեկացնում է, որ հանրապետության ցածրադիր տարածաշրջաններում, մինչև մարտի վերջ կարող են դիտվել սառնամանիքներ, իսկ մինչև ապրիլի 3-րդ տասնօրյակի սկիզբը, կպահպանվի ցրտահարությունների վտանգը:*

*Հետագա հնարավոր կորուստներից խուսափելու նպատակով, նախարարությունը հորդորում է Արարատի, Արմավիրի մարզերի և նախալեռնային գոտու ցածրադիր հատվածի համայնքների գյուղացիական տնտեսություններին, ավելորդ շտապողականություն չցուցաբերել և առայժմ կազմակերպել միայն հնդավոր (խնձորենի, տանձենի, սերկևիլենի), իսկ փետրվարի 25-ից հետո՝ կորիզավոր (դեղձենի, ծիրանենի և այլն) պտղատեսակների էրգի աշխատանքները: Խաղողի այգեբացը, վազերի էրգը և վաղահաս կարտոֆիլի տոնկը նպատակահարմար է իրականացնել մարտի 5-ից հետո:*

Ագրոլրատու
Փետրվար 25 - մարտ 6, 2015 թ.
թիվ 4 (2059)

ՈՌՈԳՈՒՄ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

***Օրերս Մասիս ՁՕԸ-ում տեղի է ունեցել աշխատանքային խորհրդակցություն, որը վարել է ՀՀ Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը:***

Խորհրդակցությանը մասնակցել են մարզպետի տեղակալ Աշոտ Վարդանյանը, մարզպետարանի բնապահպանության և գյուղատնտեսության վարչության պետ Հայկազ Տերտերյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության Ջրային պետական կոմիտեի ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչության պետ Կարեն Դաղբաշյանը, Մասիսի ՁՕԸ-ի պետ Վարդան Մովսիսյանը, համայնքապետեր: Ողջունելով ներկաներին՝ մարզպետն անդրադարձել է գյուղատնտեսական տարվա մեկնարկային փուլում տարվող աշխատանքներին ու մարզում այդ ոլորտի խնդիրներից բխող առաջնահերթություններին: Խոսելով գյուղատնտեսական աշխատանքների կառուցողականության ու արդյունավետության մասին՝ մարզի ղեկավարն այս գործընթացում կարևորել է համայնք-բնակիչ համատեղ աշխատանքը: Ռուբիկ Աբրահամյանն առաջարկել է նաև մշակել և առաջնորդվել աշխատանքային այնպիսի ձևաչափով, որի արդյունքում՝ գյուղատնտեսության ոլորտում ոչ միայն կնկատվեն դրական տեղաշարժեր, այլև արդյունքից գոհ կլինի գյուղացին: Այնուհետև, գյուղատնտեսական տարվա մեկնարկային փուլում, ոռոգման ջրամատակարարումն ապահովելու աշխատանքներին միտված զեկույցով հանդես է եկել Մասիսի ՁՕԸ-ի տնօրեն Վարդան Միհասյանը:

Անդրադառնալով Սայաթ-Նովա, Դաշտավան-Զորակ և այլ ջրանցքներում հունվարի 24-ից սկսված մաքրման աշխատանքներին՝ Վարդան Մովսիսյանը հավելել է նաև, որ ոռոգման ջրատարերի մաքրման աշխատանքները դեռևս շարունակվում են:

Խորհրդակցության ընթացքում, համայնքի ղեկավարները հանդես են եկել առաջարկություններով և հիմնախնդիրների արծարծմամբ, որոնց լուծման առնչությամբ մարզպետը տվել է համապատասխան առաջարկներ և հանձնարարականներ:

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

# ՍԵՐՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

***Վերջերս ՀՀ Շիրակի մարզպետարանում տեղի է ունեցել «Հայկական Կարմիր Խաչի» ընկերության կողմից, Շիրակի մարզում 2010 թվականից իրականացված՝ «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի նախորդ փուլերին իրականացված աշխատանքների հաշվետվությունը, որից հետո մարզի թվով 18 համայնքների հետ ստորագրվել է հետագա համագործակցության փոխըմբռնման հուշագիր:***

Միջոցառմանը մասնակցում էին «Հայկական Կարմիր Խաչի» ընկերության տնօրեն Մխիթար Մնացականյանը, պաշտոնատար այլ անձինք: Մասնակիցներին ողջունել է ընկերության տնօրեն Մխիթար Մնացականյանը, ով իր ելույթում կարևորել է նմանատիպ սերտ համագործակցությունը:

Այնուհետև միջոցառման մասնակից գյուղական համայնքների՝ Արեգնադեմ, Ազատան, Առափի, Բենիամին, Շիրակ, Ջաջուռ, Քեթի, Կապս, Մեծ Սեպասար, Բերդաշեն, Ձորաշեն, Փանիկ, Նոր Կյանք, Անուշավան, Պեմզաշեն, Մեծ Մանթաշ, Սառնաղբյուր, Շիրակավան ղեկավարները ստորագրել են ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի, Հայկական Կարմիր Խաչի ընկերության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության Շիրակի մարզային փրկարար ծառայության միջև համայնքային կամավորական արձագանքման թիմերի պահպանման, զարգացման և օգտագործման ոլորտում համագործակցության և փոխօգնության մասին, համաձայն որի, կողմերը՝ ելնելով արտակարգ իրավիճակների կանխարգելման ոլորտում միասնական առաքելությունից և խնդիրներից, հնարավոր աղետների դեպքում, արդյունավետ և օպերատիվ միասնական արձագանքում ապահովելու, ինչպես նաև՝ աղետներին պատրաստվածության, ռիսկի նվազեցման և կանխման, աղետների հետևանքների վերացման ուղղությամբ արդյունավետ համագործակցության միջոցով, համայնքների կայուն զարգացումն ապահովելու համար:

ՋՐԱՊԱՀՈՎՈՒՄ

# ԿԱՌՈՒՑՎԵԼՈՒ Է 4 ՋՐԱՄԲԱՐ

***Հայաստանի ջրապահովման խնդիրը լուծելու համար, առաջիկայում նախատեսվում է կառուցել Կապս, Վեդի, Եղվարդ, Մաստարա ջրամբարները:***

Գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Միհր Մկրտումյանը նշեց, որ նախապատրաստական աշխատանքներն արդեն սկսվել են: Ըստ նրա՝ մինչև 2015 թ.-ի ավարտը պատրաստ կլինեն Վեդիի և Կապսի ջրամբարների նախագծահաշվարկային փաստաթղթերը, և 2016 թ.-ից կսկսվի շինարարությունը: Մ. Մկրտումյանը հավելեց, որ առաջին անգամ հանրապետությունում վերականգնվել է Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Մարմարիկի ջրամբարը, որը 25 մլն խմ լրացուցիչ ջուր կուտակելու հնարավորություն է տալիս և մեծ ազդեցություն ունի Սևանա լճի մակարդակի վրա: Մկրտումյանը վստահ է, որ այս չորս ջրամբարների կառուցումը հնարավորություն կտա Հայաստանին կուտակել ոռոգման համար անհրաժեշտ ջուր և հնարավորինս քիչ դիմել Սևանա լճից լրացուցիչ ջրառի օգնությանը:

ԾՐԱԳԻՐ

# ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

***Վերջերս ՀԱԱՀ-ում, «Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում, 2013թ.-ի սեպտեմբերի 5-ին «Կրթական ծրագրերի» ԾԻԳ-ի և ՀԱԱՀ հիմնադրամի միջև դրամաշնորհային պայմանագրով նախատեսված «Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի ստեղծում» ծրագրի 5.1-ի շրջանակներում, ֆերմերների, ԳԱՄԿ-երի ներկայացուցիչների և ոլորտի մյուս մասնակիցների համար կազմակերպվել էր սեմինար:***

Կառավարության կողմից առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ագրարային ոլորտի ուսանողների գործնական գիտելիքների և ունակությունների հետագա զարգացմանն ու խորացմանը, և դրա լուծմանն ուղղված մի քանի հիմնական թիրախների հաղթահարմանը:

ՀՀ կառավարության և ԿԳՆ օժանդակությամբ, Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում, «Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի ստեղծում» դրամաշնորհը հնարավորություն ընձեռեց ՀԱԱՀ-ին ունենալ ժամանակակից գյուղտեխնիկա: Ծրագիրը ֆինանսավորել է Համաշխարհային բանկը, որի տրամադրած մոտ 150 հազ. դոլարով գնվել է 17 անուն գյուղտեխնիկա:

Սեմինարի ընթացքում քննարկվեցին՝ ագրոպարենային համակարգի, դրա մեքենայացման ոլորտում կրթության որակի, ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների բարձրացմանը, համալսարանի մեքենատրակտորային պարկի ժամանակակից չափանիշներով կահավորման, տարբերակված հողօգտագործման և երկրագործության վարման պայմաններում, գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման վերաբերյալ խորհրդատվության արդյունավետության ապահովման, հանրապետության ագրոարդյունաբերական համալիրի համար բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման ու վերապատրաստման վերաբերյալ թեմաներ: Սեմինարի ընթացքում ծրագրի և դրա հնարավորությունների մասին ներկայացրեց Գրաֆիկայի և մեքենաների նախագծման հիմունքների ամբիոնի վարիչ, ծրագրի համակարգող Ա. Ամիրյանը: Ծրագիրն ունի իր ինտերնետային հարթակը՝ ticas.anau.am, որտեղից յուրաքանչյուր ֆերմեր կարող է ծանոթանալ ներկրվող տեխնիկայի ծագման, օգտագործման արդյունավետության մասին:

Քննարկմանն ակտիվորեն մասնակցեցին նաև ԳԱՀԿ-ի և ԳԱՄԿ-երի ներկայացուցիչները: Նրանք, կարևորելով թեմայի արդիականությունը, նշեցին որ ԱՀՈՒԱԿ-ի առկայությունից կշահեն նաև գյուղական շրջանների բնակիչները:

Ծրագրի շրջանակներում Հայաստան ներմուծված գյուղատնտեսական սարքավորումները, ուսուցմանը զուգընթաց, կօգտագործվեն նաև շրջակա ֆերմերային տնտեսություններին պայմանագրային հիմունքներով ծառայությունների մատուցման աշխատանքներում՝ զուգակցելով ուսանողների պրակտիկ փորձի ձեռք բերման իրականացումը:

*Նարինե Անդրեասյան*
*Կոտայքի ԳԱՄԿ*

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

***Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի մոտ կայացած խորհրդակցությունը նվիրված էր մարզի մի շարք համայնքների ջրամատակարարման համակարգերի նորացման ընթացքի, հետագա ծրագրերում նոր համայնքների ներգրավման, ոլորտում առկա այլ խնդիրներին:***

Խորհրդակցությանը մասնակցում էին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գործադիր տնօրեն Պատրիկ Լորենը, նույն կազմակերպության Գեղարքունիքի մարզի ստորաբաժանումների ղեկավարները և մասնաճյուղերի պետերը, շահագրգիռ կողմ հանդիսացող՝ Մարտունի, Վարդենիս, Սևան, Ճամբարակ, Գավառ քաղաքային և Դդմաշեն, Ծաղկունք, Սեմյոնովկա, Ծավագյուղ, Լճաշեն, Ծովազարդ, Գանձակ, Սարուխան, Ծաղկաշեն, Ներքին Գետաշեն, Գեղհովիտ, Ակունք, Նորակերտ, Շատվան համայնքների ղեկավարները: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գործադիր տնօրեն Պատրիկ Լորենը՝ ներկայացնելով 2014 թվականին Գեղարքունիքի մարզում կատարված աշխատանքները, հավաստիացրել է, որ կիսատ մնացած ծրագրերը շարունակվելու են 2015 թ. և դրան հաջորդող տարիների ընթացքում: «Մարզում սպասարկման ոլորտում գտնվող խմելու ջրի մատակարարման համակարգի նորացման խնդիրները հնարավոր կլինի կարգավորել առաջիկա տարիների ընթացքում, աստիճանաբար, սահմանված ժամանակացույցով»,- նշել է Լորենը:

Համայնքի ղեկավարները ներկայացրել են իրենց համայնքներում ջրամատակարարման հետ կապված առկա խնդիրները, առաջիկա հրատապ անելիքները, շինարարական աշխատանքների ընթացքը: Նրանք պատրաստակամություն են հայտնել հետագայում ևս համագործակցել «Հայջրմուղկոյուղի» ընկերության հետ՝ գոհունակություն հայտնելով համագործակցության ներկա ընթացքից:

«Կարևորն այն է, որ ստեղծվել է փոխադարձ վստահության մթնոլորտ՝ համայնքների և ոլորտը սպասարկող կազմակերպության միջև: Համոզված եմ, որ համագործակցության նման պայմաններում առաջիկա մեկ տարում խնդիրները մեզանում որոշ չափով պակասած կլինեն»,- նշել է Գեղարքունիքի մարզպետը: Նրա առաջարկով՝ հատուկ քննարկվել են Վարդենիս և Ճամբարակ քաղաքների ջրամատակարարման համակարգերի նորացման հետ կապված խնդիրները:

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

## «ՋՐՎԵԺ-ՁՈՐԱՂԲՅՈՒՐ» ՁՕԸ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

***«Ջրվեժ-Ձորաղբյուր» ՁՕԸ-ի (ջրօգտագործողների ընկերություն) գործադիր տնօրեն Վարուժան Սահակյանն ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի բաժինը: Երկար տարիներ աշխատել է իր մասնագիտությամբ՝ 1998թ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից գործուղվել է Իսրայել՝ ժամանակակից ոռոգման եղանակներին (կաթիլային և անձրևացման) ծանոթանալու և վերապատրաստվելու նպատակով: 2003 թ. նշանակվել է «Ջրվեժ-Ձորաղբյուր» ջրօգտագործողների ընկերության տնօրեն և մինչ օրս ղեկավարում է ընկերության աշխատանքները:***

***Ընկերության գործունեության մասին պատմեց Վ. Սահակյանը:***

**-Պարոն Սահակյան, ե՞րբ է հիմնադրվել ընկերությունը և ի՞նչ աշխատանքներ են իրականացվում:**

-«Ջրվեժ-Ձորաղբյուր» ջրօգտագործողների ընկերությունը (ՁՕԸ) հիմնադրվել է դեռևս 2003 թվականին: Ընկերության հիմնական նպատակը՝ ջրօգտագործողներին ջրով ապահովելն է: Ստեղծված օրվանից մինչ այսօր, նոր ջրագծերի կառուցման և առավել արդյունավետ ջրամատակարարման կազմակերպման արդյունքում, շուրջ 10-15 %-ով ավելացել են ոռոգելի հողատարածքները:

**- Մատակարարվող ջուրը մինչև սպառողին հասնելը ի՞նչ միջոցներով եք վերահսկում:**

-Ընկերության հիմնական ջրաղբյուրներն են համարվում՝ Կոտայքի ջրանցքը, Դերիվացիոն ջրանցքը, Ազատի 4-րդ աստիճանի ջրհան կայանը և թվով 9 պոմպակայաններ և 12 խորքային հորեր: Ջուրը ջրօգտագործողներին է հասնում փակ խողովակներով, կիսախողովակներով, հողային հունով, առուներով:

Խոշոր ջրօգտագործողներին ջուրը տրվում է ջրաչափական դիտակետերից, կան նաև ջրօգտագործողներ, որոնց ջուրը տրվում է էլեկտրոնային ջրաչափերով, իսկ գյուղացիներին ջուրը տրվում է շարժական ջրաչափերի միջոցով: Ընկերության կողմից մատակարարված ջուրը վերահսկվում է տարածքային տեղամասերի պետերի և ինժեներ-հիդրոտեխնիկների կողմից:

**- Ի՞նչ խնդիրներ կան ջրամատակարարման ապահովման հետ կապված և ի՞նչ միջոցներ պետք է ձեռնարկվեն:**

- Խողովակաշարերը կառուցված են 60-70-ական թվականներին՝ անցնում են տնամերձ և սեփականաշնորված հողերի միջով, որը խոչընդոտում է շահագործման աշխատանքների կազմակերպմանը: Համակարգում առկա խնդիրների վերացման համար հարկավոր է իրականացնել հիմնանորոգման աշխատանքներ: Պահպանված չեն օտարման գոտիները, որի հետանքով մեծ դժվարություն է առաջանում բնականոն ջրամատակարարում ապահովելու համար:

Ինչպես նշեցի, հիմնական ջրաղբյուրներից է համարվում Կոտայքի մայր ջրանցքը, որը (կառուցվել է 1959թ.) սկիզբ է առնում Չարենցավանի գլխամասային հանգույցից և ավարտվում է Ջրվեժ համայնքի տարածքում, երկարությունը՝ մոտ 32 կիլոմետր է: Հիմնական ջրաղբյուրներից են նաև Ազատի 4-րդ աստիճանը, որը ջուր է մատակարարում Գեղադիր, Ողջաբերդ, Ձորաղբյուր, Ջրվեժ համայնքներին և «Արգելոցապարկային» ՊՈԱԿ համալիրին:

Վերանորոգման աշխատանքներ պետք է իրականացնենք նաև Չարենցավանի գլխամասային թունելի հատվածում, Արամուսում, Ողջաբերդի սողանքային գոտում:

Կատարվում են նոր ինքնահոս ջրագծի նախագծման աշխատանքներ, որի կառուցման արդյունքում, Ազատի 4-րդ աստիճանի ջրհան կայանը դուրս կգա շահագործումից, կտնտեսվի էլեկտրաէներգիա և կկատարվի բնականոն ջրամատակարարում:

Պտղնի թիվ 1 ջրհան կայանը ջուր է մատակարարում Պտղնիի այգեգործական ընկերություններին և Պտղնի համայնքին: Անհրաժեշտ է Կոտայքի ջրանցքից անցկացնել ինքնահոս ջրագիծ՝ Պտղնի համայնքին և այգեգործներին ինքնահոս եղանակով ջրամատակարարում ապահովելու համար:

*Մ. Կիրակոսյան*

ՄԹԵՐՈՒՄ

## ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

***Մինչև ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի դրամաշնորհը ստանալը, Բագրատաշենցի Էդիկ Շահսուվարյանը մոտ մեկ տարի շահագործել է 35 մ³ սառնարանային տնտեսություն:***

Դրամաշնորհի միջոցով, ստանալով անհրաժեշտ սարքավորումները, նա նոր սառնարան հիմնադրելու ծախսերը կրճատել է կրկնակի: Հին սառնարանի տեխնիկան խորհրդային ժամանակներից էր մնացել և արդյունավետ չէր: Նոր սարքավորումներով և նոր գործարար ծրագրով նա նպատակ ունի ընդլայնել սառնարանը մինչև 70 մ³ և այնտեղ պահել մինչև 11 տոննա գյուղմթերք, հիմնականում՝ արքայանարինջ: Բերքը վաճառելու ամենաարդյունավետ սեզոնը՝ տարվա վերջն է: Շահսուվարյանը մտադիր է սառնարանում պահել իր այգիներից ստացած բերքը: Նա ունի արքայանարնջի և նռան 3 հեկտարանոց այգի: Բագրատաշենցի գործարարը մտադիր է 70 մ³ տարողությամբ առանձին սառնարան հիմնել նաև նռան համար: Դեռևս նռան ծառերը բերք չեն տալիս: «Ցանկանում եմ արտադրանքն արտահանել հիմնականում Ռուսաստանի Դաշնություն, եթե միջոցներս բավարարեն»,- ասում է ֆերմերը և շեշտում, որ բեռնափոխադրման ծախսը շատ մեծ է: Էդիկ Շահսուվարյանը Բագրատաշենում մասնակցել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կազմակերպած և USAID/PRP ծրագրի շրջանակում անցկացված սկսնակների աջակցության գործարար ծրագրին: Ասում է՝ դասընթացի ընթացքում ստացած գիտելիքը կօգնի ավելի լավ կազմակերպել իր ագրոբիզնեսը:

*Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ*
*www.smednc.am*

ԱՐՄԱՎԻՐ

## ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

***«Ինչպես վերաբերվես հողին, այդպես էլ հողը կպատասխանի քեզ»,- ասում են արմավիրցի հողագործները: Այսօր պարապ մարդ քիչ կտեսնես Արամավիրի ու Վաղարշապատի տարածքի գյուղերում:***

Մեծամասնությունը դաշտերում է, մի մասը աճեցրած կանաչեղենն է շուկա հանում, մյուս մասն էլ ջերմոցներում լոլիկի ու վարունգի թաղարներն է սածիլում: Տարին բարեբեր է ջերմոցային տնտեսությամբ զբաղվողների համար, այս տարի ավելի քիչ են վառելիք օգտագործել: Դեռևս միակ հուսադրողը դա է: Մնացած աշխատանքներն նախորդ տարիների նման է, նույնն հոգսերն են ու նույն դժվարությունները:

Արմավիրի ԳԱՄԿ-ի մասնագետները, գյուղատնտեսության խորհրդատուների հետ միասին, վերջերս շրջայցեր էին կազմակերպել մարզի տարբեր համայնքներ՝ կատարվող աշխատանքներին ծանոթանալու և ֆերմերներին անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն մատուցելու համար:

Առաջին այցը մարզի Շահումյան գյուղում էր. բնակիչների մեծամասնությունն այստեղ զբաղվում է թռչնապահությամբ և անասնապահությամբ: Ինչպես նշում է համայնքի ղեկավար Հ. Նավասարդյանը, այդ երկու ճյուղերը գյուղի համար ավելի եկամտաբեր են, քան՝ հողագործությամբ զբաղվելը: Չնայած դրան՝ հողերը բերրի են ու գրեթե ոռոգման խնդիր չունեն, բայց գյուղում առկա մի մեծ բաց կա՝ գյուղը սեփական տրակտոր չունի: Այն ձեռք բերելու համար, գյուղապետարանն անհրաժեշտ գումար չունի, սպասում է կառավարության կողմից դոտացիայի:

Վաղարշապատի տարածաշրջանում հիմնականում զբաղվում են ջերմոցային և բանջարաբոստանային մշակաբույսերի մշակությամբ, որոշ մասն էլ՝ խաղողի այգիների մշակությամբ, նաև պտղաբուծությամբ: ԳԱՄԿ-ի մասնագետներն այցելելով տարածքի՝ Մրգաստան, Նորակերտ, Աղավնատուն, Այգեկ, Բաղրամյան համայնքներ, զրուցեցին ֆերմերների հետ, ծանոթացան նրանց հուզող խնդիրներին: Հովտամեջ գյուղում, ֆերմեր Աշոտ Մխիթարյանի այգում կատարեցին խնձորի ծառերի ցուցադրական էտ, ներկա ֆերմերների հետ զրուցեցին առաջիկա գարնանային աշխատանքների մասին: ԳԱՄԿ-ի աշխատակիցները Գրիբոյեդով համայնքում ջերմոցատերերին ներայացրեցին, թե ինչպես ժամանակակից տեխնոլոգիաներով ու ավելի արդյունավետ մշակեն ջերմոցները, որպեսզի խուսափեն ավելորդ ծախսերից, ժամանակին իրականացվող պայքարի կանխարգելիչ միջոցառումների շնորհիվ մշակաբույսերը զերծ պահեն հիվանդություններից և վնասատուներից: Արմավիրի մարզի մի քանի համայնքներում ֆիլոքսերայի պատճառով քանդվել են խաղողի այգիները և այդ տարածքներում սահմանվել է կարանտին:

Չնայած կանխարգելիչ միջոցառումներին՝ Նորապատ համայնքում ֆիլոքսերայով վարակվել է 6,5 հա խաղողի այգի, որն ամբողջովին ենթակա է քանդման: Հանդիպելով այգետերերի հետ՝ ԳԱՄԿ-ի մասնագետները մանրամասն ներկայացրեցին վնասատուի մասին տեղեկատվություն՝ նշելով վտանգները: Նրանք այգետերերի հետ բացատրական աշխատանքներ են անցկացրել, այնուհետև բաժանել տեղեկատվական թերթիկներ: Քանդման ենթակա այգիների տերերը երեք տարվա համար կստանան փոխհատուցում՝ միանվագ մեկ հա-ի համար տարեկան 1,5 միլիոն դրամ:

Հաջորդ այցը Բամբակաշատ գյուղում էր, որտեղ խաղողի այգիներում իրականացվում էին խաղողի այգեբաց և էտ: Գյուղատնտեսության խորհրդատու Սարգիս Ղարաեմիշյանը ներկայացրեց, թե ինչպես ձևավորել խաղողի վազը, որպեսզի այն բնականոն աճ ունենա և առատ բերք տա: Այգեվան գյուղում մասնակցեցին ծիրանի այգու ցուցադրական էտին, որտեղ ֆերմերներին նրկայացրեցին ծիրանի ծառի ձևավորման աշխատանքները: Խորհուրդ տրվեց գյուղացիներին պտղատու ծառերը սրսկել Բորդոյան հեղուկի 3 %-ոց լուծույթով, բները սպիտակացնել հանգած կրի լուծույթով, այգու մածուկով պատել կտրված կմախքային մասերը:

Այցելությունները մարզի տարածքի գյուղեր շարունակվում են:

*Սահականուշ Արոյան*
*Արմավիրի ԳԱՄԿ*

Ագրոլրատու
Փետրվար 25 - մարտ 6, 2015 թ.
թիվ 4 (2059)

**ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

# ԱՇՆԱՆԱՑԱՆ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

***Հացահատիկի արտադրության ավելացումը հանրապետությունում պետք է կապարվի մշակվող ցանքատարածությունների բերքատվության առավելագույն բարձրացման և անթույլատրելի կորուստների վերացման հաշվին՝ ելնելով հողային սահմանափակ հնարավորություններից: Աշնանացանների բերքի ձևավորումը սկսվում է վաղ գարնանից: Ուստի, կարևորվում են դրանց հերձմնեռային վիճակի ստուգումը, գարնանային մշակության աշխատանքների ժամանակին ու որակով կատարումը:***

Աշնանացանները հաճախ տուժում են աշնանային, ձմեռային և վաղ գարնանային ցրտահարություններից: Ուժեղ սառնամանիքների հետևանքով, հողը զգալի խորության վրա սառչում է, իսկ որոշ վայրերում բացասական ջերմաստիճանը, բույսերի թփակալման հանգույցի խորությամբ և, նույնիսկ, ավելի խորը իջնելով, հասնում է ծայրագույն մակարդակի:

Վնասված և խիստ նոսրացած ցանքատարածություններում անհրաժեշտ է կատարել վերացանք՝ երկցան կամ գարնանացան հացահատիկային մշակաբույսերով: Խորհուրդ է տրվում ցանքը կատարել գարնան փոցխումից անմիջապես հետո՝ աշնանացանների շարքերին հակառակ ուղղությամբ կամ՝ անկյունագծով: Եթե աշնանացանի ցանքերում գարնանը մեկ քառակուսի մետրի վրա մնացել է 220-250 բույս, և գարունն էլ, վաղ սկսվելով, նպաստավոր է, ապա անհրաժեշտ է ստեղծել միայն լավ ագրոֆոն: Աշնանից լավ թփակալված և բավարար ձմեռած ցանքերում դաշտի միանվագ փոցխումը դրական արդյունք է տալիս: Ուժեղ ամրացած հողերում, որտեղ բույսերի թփակալումը լավ է, արդյունքը՝ 2 երես փոցխելու դեպքում, ավելի մեծ է լինում: Ցանքերը, որտեղ բույսերը թույլ են զարգացած և աշնանը չեն թփակալվել, փոցխումը պետք է հետաձգել՝ այն կատարելով թփակալման փուլում:

Աշնանացանների ցանքերում, առաջին իսկ հնարավորություն դեպքում, պետք է կատարել ազոտական պարարտանյութերով սնուցում: Նոսրացած ցանքերում ազոտի չափաբաժինը կարելի է բարձրացնել 25-30 տոկոսով: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ազոտի համահավասար ներմուծմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հողատարածքի առանձնահատկությունները, նկատի ունենալով աշնանը տրված պարարտանյութերի տեսակն ու նորման, աշնանացանի նախորդը, հողի պահուստային խոնավությունը, ջրովի և անջրդի պայմանները և այլն:

Արարատյան հարթավայրի գորշ, մարգագետնային ոռոգելի հողերում, աշնանացան ցորենի 65-70 g/ha բերք ապահովելու համար, անհրաժեշտ է հեկտարին՝ ազդող նյութի հաշվով, տալ 150 կգ ազոտ: Արարատյան դաշտավայրի նախալեռնային գոտու ոռոգելի հողերում, 50-55 g/ha բերքատվության դեպքում, շարահերկ մշակաբույսերից հետո սնուցումը կատարել 120 կգ/ha, բազմամյա խոտերից հետո՝ 90 կգ/ha նորմայով: Անջրդի գորշ հողերում նշված նորմաները պետք է կրճատել 30-40 տոկոսով:

Արարատյան դաշտավայրի նախալեռնային գոտու անջրդի շագանակագույն հողերում (25-30 g/ha բերքատվության դեպքում) հացահատիկային նախորդներից հետո սնուցումը կատարվում է 90, ցելերից և բազմամյա խոտաբույսերից հետո՝ 60 կգ/ha նորմաներով:

Լեռնային անջրդի շագանակագույն և սակավահումուս հողերում, 25-30 g/ha բերքատվության դեպքում, ցելերից և բազմամյա խոտերից հետո սնուցել 60, հացահատիկային մշակաբույսերից հետո՝ 90 կգ/ha չափաբաժիններով: Լեռնային սևահողերի անջրդի պայմաններում, Շիրակում և Սևանի ավազանի անբավարար խոնավության գոտիներում, 30-35 g/ha բերքատվության ակնկալիքի դեպքում, ցելերից և բազմամյա խոտաբույսերից հետո, անհրաժեշտ է ազոտի չափաբաժինը կրճատել 30 տոկոսով: Լոռի-Փամբակի գոտու բնական խոնավությամբ ապահովված լեռնային լվացված սևահողերում, 45-50 g/ha բերքատվության դեպքում, հացահատիկային նախորդից հետո սնուցել 150, իսկ շարահերկ մշակաբույսերից հետո՝ 120 կգ/ha ազոտի չափաբաժնով:

Հյուսիս-արևելյան գոտու ջրովի դարչնագույն, անտառային հողերում (35-40 g/ha բերքատվության դեպքում) շարահերկ մշակաբույսերից հետո, անհրաժեշտ է հեկտարին տալ 120, իսկ բազմամյա խոտաբույսերից հետո՝ ազոտի նորման կրճատել 30 տոկոսով: Խորհուրդ է տրվում բույսերի ազոտային սնուցման ժամանակ համատեղ հացահատիկի դաշտերը սրսկել Կրիստալին աճման խթանիչով (2,5կգ/ha չափաբաժնով), որի կիրառման դեպքում ստացվում է 2-3 g/ha բերքի հավելում:

Հանրապետության ջրովի երկրագործության վարման գոտիներում, սնուցումից անմիջապես հետո, անհրաժեշտ է իրականացնել ոռոգում: Արարատյան դաշտավայրի պայմաններում, ծովի մակերևույթից մինչև 900 մ բարձրության վրա, ջրումը կատարվում է 3-4 անգամ: Հացահատիկային մշակաբույսերի համար կարևոր նշանակություն ունի վերջին հատիկալիցի ջուրը, որը համընկնում է կաթնամոմային հասունացման փուլի հետ: Ցանքերի գարնանային խնամքի միջոցառումների շարքում կարևոր նշանակություն ունի նաև պայքարը մոլախոտերի դեմ:

Հացահատիկի դաշտերում, քիմիական քաղհանի նպատակով, լայնորեն կիրառվող հերբիցիդներից է 2.4 Դ ամինային աղը (0.85 -1.4 լ/ha նորմայով): Եթե աշնանացանի դաշտը վարակված է միաշաքիլ (հացազգի) և երկշաքիլ մոլախոտերով, անհրաժեշտ է սրսկել Պումա սուպեր (0.75 լ/ha) և Գրոդիլ մաքսի(0,115 լ/ha) հերբիցիդների խառնուրդով: Խրփուկով ուժեղ վարակված դաշտերը սրսկել Տոպիկ պատրաստուկով՝ 0.3-0.4 լ/ha չափաբաժնով: Միամյա հացազգի մոլախոտերի առկայության դեպքում, պատրաստուկի նորման հասցնել 0.5-0.75 լ/ha-ի: Տատասկով, երիցուկով, մատիտեղով վարակված դաշտերը կարելի է սրսկել Լոնտրել-300 պատրաստուկով՝ 0.16-0.66 լ/ha նորմայով: Պատատուկով վարակված ցանքերը սրսկել Ստարանե հերբիցիդով՝ 0.75-1.0 լ/ha նորմայով:

Սրսկումներն անհրաժեշտ է կատարել մինչև բույսերի ցողունակալման փուլը, արևոտ օրերին, երբ օդի ջերմաստիճանը հասնում է ոչ պակաս 12$^0$C: Ուշացած սրսկումների դեպքում, բույսերի մոտ առաջանում են այլասերումներ, հասկի հիմքի և ծայրի մասերում հատիկ չի ձևավորվում, և հասկերը ստացվում են սորտին ոչ բնորոշ: Հացահատիկային մշակաբույսերի գարնանային մշակության տեխնոլոգիայի ճիշտ և ժամանակին կիրառումը հնարավորություն կտա ֆերմերային տնտեսություններին, ըստ մշակության գոտիների, միջին հաշվով, ստանալու 5 -10 g/ha հատիկի լրացուցիչ բերք:

*Ռ. Ղազարյան*
*գյուղատնտեսական գիտությունների թեկնածու,*
*Երկրագործության գիտական կենտրոն*

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ**

# ՇԱՔԻՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ ԵՆ

**1500 բնակիչ և 300 տնտեսություն ունեցող Շաքիի գյուղական համայնքում մարդկանց եկամտի հիմնական միջոցը՝ գյուղատնտեսությունն է, մասնավորապես՝ անասնապահությունը:**

Համայնքի աշխատակազմի քարտուղար Գոռ Առաքելյանը նշում է, որ գյուղում 1500-ից ավելի խոշոր եղջերավոր անասուն կա, մեծ տնտեսություն ունեցող ֆերմերներ, տարեցտարի անասունների գլխաքանակն ավելանում է, սակայն մսի իրացման հետ կապված դժվարությունների պատճառով մարդիկ չեն կարողանում առավել եկամուտներ ապահովել: Մսի իրացման հնարավորությունների ստեղծումը կարևորում է նաև գյուղապետը Վահան Ղազարյանը՝ նշելով, որ անասնապահությունն իսկապես կարող է բավարար եկամուտներ ապահովել, եթե իրացման խնդիրը լուծվի: Չնայած դրան, վերջին տարիներին գյուղում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի ավելացման միտում է նկատվում: «Վերավաճառողները միշտ շահում են, արտադրողները կարող են ավելի շատ շահույթ ստանալ, եթե մսի կամ, ընդհանրապես, գյուղատնտեսական մթերքների իրացումն ապահովող կազմակերպչական աշխատանքներ իրականացվեն, դրանով հարցին համակարգային լուծում կտրվի. որտեղ էլ որ սպանդանոց կառուցվի կամ մսի կոմբինատ, միևնույն է, դրանից հեռու գյուղերը կտուժեն, ուստի անհրաժեշտ է մտածել մթերումը կազմակերպելու մասին», -ասում է համայնքի ղեկավարը: Ըստ նրա՝ համայնքում առկա 1377 հա վարելահողերի մոտ 90 տոկոսը մշակվում է, սակայն վերջին տարիներին հացահատիկի մշակության ծավալները նվազել են՝ զիջելով կերային մշակաբույսերին: Բացի այդ, կան ֆերմերներ, ովքեր մտադրություն ունեն զբաղվել սիսեռի, ոսպի, կտավատի մշակությամբ: Այս գործում, ըստ համայնքի ղեկավարի, իրենց աջակցում են Սյունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի խորհրդատուները՝ տրամադրում են տեղեկատվական նյութեր, մատուցում խորհրդատվություն: Նրա խոսքով՝ ֆերմերները հետաքրքրությամբ են կարդում կենտրոնի կողմից հրատարակվող «Բան ու գործ» թերթը: «Խորհրդատվության դերը շատ է բարձրացել մեր օրերում, մանավանդ նոր տեխնոլոգիաների կիրառման առումով, շատ կարևոր է լսել մասնագետների կարծիքը, հաշվի առնել նրանց դիտարկումները: Օրինակ, հենց խորհրդատվության արդյունքում է, որ մեր գյուղում սկսել են ավելի հաճախ կիրառել ցանքաշրջանառություն, քան՝ մինչև այժմ», - ասում է Վահան Ղազարյանը: Նա նաև նշում է, որ Շաքիում գյուղատնտեսության նախարարության կողմից տրվող շուկայականից էժան սերմացուի, պարարտանյութի պահանջարկը մեծ է, և իրենք կարողանում են անհրաժեշտ քանակով ապահովել տնտեսություններին:

«Մեր համայնքը տարածաշրջանի այլ գյուղերից գրեթե ոչնչով չի տարբերվում. աշխատող մարդիկ են, բայց բավարար եկամուտներ չեն ստանում: Գյուղատնտեսությունը ռիսկային ոլորտ է, վարկեր շատ են վերցնում, և հազիվ վարկի տոկոսը, հաջողության դեպքում՝ մայր գումարն են վճարում, շահույթը չնչին է», - նշում է աշխատակազմի քարտուղարը: Նրա հաշվարկով՝ 4.5 հա հող, 5 խոշոր և 15 մանր եղջերավոր անասուն ունեցող ընտանիքի եկամուտը տարեկան կարող է 1,8 -2 միլիոն դրամ կազմել, բայց դրանով հազիվ հաջորդ տարվա ցանքն են անում, անասունների կերն ապահովում, վարկ փակում, իսկ բարեկեցությունը բարելավելու կամ տնտեսությունն ընդլայնելու համար միջոցները չեն բավարարում: Այս խնդրի լուծմանը կարող է նպաստել նաև համայնքի համար կենսական նշանակություն ունեցող խմելու, ոռոգման ջրի հարցի լուծումը, քանի որ, առանց այն էլ, սակավ խմելու ջուրն է օգտագործվում ոռոգման նպատակով, իսկ այդ խնդիրների լուծման համար տեղական բյուջեն բավարար հնարավորություններ չունի:

Շաքիի գյուղապետն ուրախությամբ է նշում, որ իրենց գյուղում արտագաղթի ծավալները մեծ չեն, ավելին, վերջին երկու տարում տասը նոր բնակիչ է եկել իրենց գյուղ: 2014 թվականին գյուղում 12 երեխա է ծնվել, ինչը, համայնքի ղեկավարի խոսքով՝ նախորդ տարիների համեմատ, բարձր ցուցանիշ չէ, բայց միևնույն է, նա համոզված է, որ երկիրը պահողը, կերակրողը գյուղն է և տարեցտարի մարդկանց կենսամակարդակը բարձրանալու է, քանի որ պետությունը դեմքով դեպի գյուղը քաղաքականությունն է որդեգրել:

*Սուսաննա Շահնազարյան*
*Սյունիքի ԳԱՄԿ*

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

# Հրաշագործ սև բողկը

*Սև բողկը և ընդհանրապես բողկը, հաճախ է կիրառվում մեր սննդակարգում, սակայն մենք ծանոթ չենք նրա հրաշագործ հատկանիշներին: Եվ, ամենակարևորը, այն մատչելի է բոլորիս համար:*

Հույները սև բողկը խորհուրդ էին տալիս օգտագործել մարսողության կարգավորման, տեսողության և հազի համար: Իսկ հռոմեացիներն այն օգտագործել են՝ որպես հակազդող միջոց՝ սնկային թունավորումների դեմ: Բողկի հյութն հակաբակտերիալ հատկությամբ է օժտված, այն օրգանիզմում կանխում է բացիլների, սնկային հիվանդությունների ներթափանցումն ու զարգացումը: Բողկի մեջ մեծ քանակությամբ հանքային և կալիումային աղեր կան, որոնք անհրաժեշտ են մեր օրգանիզմին: Նրանում միջինը՝ 1,8 % շաքար և 1,9 % սպիտակուցներ են պարունակվում, ունի հարուստ բջջանյութ, վիտամիններ, եթերայուղեր, կալիում, յոդ, կալցիում, մագնիում, երկաթ, ֆոսֆոր, ֆտոր, կարոտին և ֆիտոցիդներ, որոնցով հատկապես հարուստ է սև բողկը:

Կալիումի և հանքային աղերի պարունակությամբ բանջարեղենի մեջ առաջին տեղում սև բողկն է, որը բնական դեղատուն է իր մեջ եղած յոդի, բրոմի, յուղերի քանակությամբ: Բողկը միզամուղ հատկություն ունի, այն օրգանիզմից հեռացնում է նաև կուտակված լեղին ու մաղձը: Բողկի հյութը խորհուրդ է տրվում նյարդային հիվանդություններով, ռևմատիզմով, իշիասով, ռադիկուլիտով, հոդատապով տառապող մարդկանց: Նվազեցնում է արյան մեջ խոլեստերինի քանակը: Բողկի արմատը անփոխարինելի կանխարգելիչ միջոց է սրտանոթային և գլխուղեղի աթերոսկլերոզի համար: Ժողովրդական բժշկության մեջ խորհուրդ են տալիս սև բողկի հյութը խմել գազարի և բազուկի հյութերի հետ միասին: Սննդակարգում պետք է բողկ օգտագործեն, հատկապես այն մարդիկ, ովքեր ծանր ֆիզիկական աշխատանք են կատարում: Իհարկե, պետք է նաև չմոռանալ բողկի հակացուցումների մասին. այն խորհուրդ չի տրվում շատ և հաճախակի օգտագործել սիրտանոթային ծանր հիվանդությունների ժամանակ:

Սև բողկն օգտագործվել է դեռևս միջնադարում՝ հատկապես որպես միզամուղ և օրգանիզմից լեղին հեռացնող միջոց: Այն հրաշալի միջոց է նյութափոխանակության և մարսողական համակարգի կարգավորման համար: Հին ժամանակներում սև բողկի հյութը, նախքան օգտագործելը, փոքր-ինչ տաքացրել են և օրը 4-5 անգամ, 1 ճ/գ չափով օգտագործել: Կարող եք խմել նաև կաղամբի հյութի հետ միասին:

Սև բողկից, օղուց պատրաստված զանգվածը օգտագործում են մկանային ցավերի դեպքում: Դրա համար անհրաժեշտ է 10 կգ սև բողկ, լավ լվանում եք, կեղևը չեք հեռացնում, սակայն կեղևի վրայի բարակ շերտը նրբորեն մաքրում եք, և դրանից հյութ եք պատրաստում: Մոտ 3 լիտր մաքուր հյութ է ստացվում: Լավ փակված վիճակում պահում եք սառնարանում, իսկ հյութից առանձնացված կոպիտ զանգվածը խառնում եք 300 գրամ մեղրի հետ՝ պահպանելով փակ ապակե տարայի մեջ: Հյութը պետք է խմել ուտելուց 1 ժամ հետո՝ 1 թեյի գդալ: Պետք է խմել 3 ամիս շարունակ: Այս սննդակարգի ընթացքում պետք է խուսափեք կծու-թթու, յուղոտ, շատ մսային սննդից, իսկ հենց հյութը վերջանա, պետք է սկսեք գործածել բողկի կոպիտ զանգվածը՝ մեղրի հետ խառնած վիճակում, որը մինչ այդ պահվում էր սառնարանում: Ի դեպ, օրգանիզմի աղերը լուծվում են նաև մաղադանոսի, մանանեխի հյութերի միջոցով: Սև բողկը օրգանիզմը, անոթները, երակները, հյուսվածքները, հոդերը մաքրում է թունավոր նյութերից, աղերից, շլակներից: Օրգանիզմը մաքրող լավագույն և անփոխարինելի միջոցը սև բողկն է, որը, բացի իր բոլոր հատկություններից և վիտամիններից, մասնակցում է նաև արյան մակարդելիությանը: Ռադիկուլիտի, ռևմատիզմի, հոդատապի դեպքում սև բողկի հյութը պետք է քսել ցավող հատվածներին՝ 3 բաժին սև բողկի հյութը խառնում եք 3 բաժին բազուկի հյութի, 2 բաժին բնական մեղրի, 1 բաժին օղու հետ, ավելացնում եք մի փոքր կերակրի աղ և 12 օր պահում սառնարանում փակ տարայի մեջ:

Սև բողկը խորհուրդ է տրվում նաև սակավարյունության, մաշկի քորի, իշիասի, չոր հազի, ջղաձգումների, ալերգիայի բուժման դեպքերում: Նույնիսկ խորհուրդ է տրվում դեղնախտի ժամանակ առավոտյան, քաղցած ստամոքսին բողկ ուտել: Սև բողկը մեծ քանակությամբ ինսուլին է պարունակում, այդ պատճառով բժիշկները շաքարախտով հիվանդներին խորհուրդ են տալիս օգտագործել այն՝ արյան մեջ շաքարի քանակությունը նվազեցնելու համար: Մեղրով սև բողկի հյութը օգնում է ազատվել աչքերի տակի կապույտներից և տարբեր հետքերից: Ռուսական ժողովրդական բժշկության մեջ բողկը նաև օգտագործվել է մալարիայի դեմ:

Ժողովրդական բժշկությունը արյան ճնշման իջեցման, օրգանիզմում քարերի առաջացման և ուռուցքների դեմ խորհուրդ է տալիս խմել բողկի թարմ հյութը՝ օրական 3 անգամ՝ 1 ճ/գ:

Առողջ եղե'ք:

***Բողկը ոչ միայն ճաշատեսակներում օգտագործվող բանջարեղեն է, այլև՝ հրաշալի դեղամիջոց: Ըստ հին լեգենդի՝ երբ Ապոլոնին հարցրել են սև բողկի արժանիքների մասին, նա պատասխանել է, որ այդ արմատապտուղն իր քաշին հավասար ոսկի արժե:***

# ՈՐՊԵՍԶԻ ՕՐԳԱՆԻԶՄԸ ՉԾԵՐԱՆԱ

***Արմավը (խուրման) հարուստ է հանքանյութերով (նատրիում, քլոր, ֆոսֆոր, կալցիում, երկաթ, ծծումբ և մագնեզիում), A, B, C վիտամիններով, սպիտակուցներով և ճարպով, որոնք ուժեղացնում են օրգանիզմի դիմադրողականությունը և պաշտպանում են վիրուսային հիվանդություններից:***

Արմավը հեշտ է մարսվում, իսկ ֆրուկտոզայի պարունակությունն օգնում է թեթևացնել նյարդային լարվածությունը: Արմավն իր մեջ ներառում է բոլոր բանջարեղենների լավագույն հատկությունները: Տարբեր վիտամիններից և բջջանյութից բացի, այն հարուստ է կալիումով, մագնեզիումով (օգտակար է սրտին), կարոտինով (օգտակար է՝

աչքերին) և լիկոպինով, որը բնական հակաքաղցկեղային ուժեղագույն միջոց է համարվում: Միայն կաթի համադրությամբ կարող է արմավում պարունակվող կարոտինը լիարժեք յուրացվել օրգանիզմի կողմից: Ըստ հրեա մասնագետների, արմավում պարունակվող մեծ քանակությամբ A վիտամինն օգնում է լավացնել տեսողությունը, նպաստում է թոքերի և բրոնխների բջիջների թարմացմանը, դանդաղեցնում է օրգանիզմի ծերացումը և կանխում աթերոսկլերոզի զարգացումը: Այն նպաստում է սերտոնին հորմոնի ձևավորմանը, որը մարդու օրգանիզմի հակադեպրեսանտն է համարվում: Կանխում է օրգանիզմի հոգնածությունը:

Արմավը պարունակում է բուսական շաքար, որն օգտակար է սրտի սնուցման համար և չի գիրացնում: Գիտնականների համոզմամբ՝ արմավն օգտակար է հիպերտոնիայի վաղ շրջանում. այն կարգավորում է արյան ճնշումը՝ առանց դեղորայքի: Անհրաժեշտ է օրական ուտել 100 գրամ արմավ: Գիտնականները երկու ամիս անընդմեջ հետազոտել են ամեն օր նվազագույնը՝ 100 գրամ արմավ օգտագործող մարդկանց արյան բաղադրությունը, երիկամների և լյարդի աշխատանքը: Պարզվել է, որ արմավի կանոնավոր օգտագործումը 15 %-ով նվազեցրել է օրգանիզմում խոլեստերինի մակարդակը: Արմավում պարունակվող բուսական գլյուկոզայի բարձր մակարդակը չի ազդել հետազոտության մասնակիցների արյան մեջ շաքարի մակարդակի բարձրացման վրա: Մասնագետները նաև հայտնաբերել են, որ արմավը դանդաղեցնում է արյան թթվայնացումը մոտ 33 %-ով, ինչը նպաստում է օրգանիզմի ծերացման դանդաղեցմանը:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
2015 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ագրոլրատու»
*թերթի*

1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
*ամսագրի*

1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատրաշ» կազմակերպությունները

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երեւան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության
հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր և
համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 13
ստորագրված է տպագրության 05.03.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երեւան, Մամիկոնյանց 39ա